ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՑՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Արցախից բռնի տեղահանվածների վերաբերյալ լուսաբանումների

- Հաշվի առնելով 2023թ. սեպտեմբերի 19-20-ին Արցախում Ադրբեջանի պատժիչ ռազմական գործողությունների, դրա արդյունքում էթնիկ զտման ու արցախցիների զանգվածային գաղթի հետեւանքով ստեղծված իրավիճակը,

- ուսումնասիրելով բռնի տեղահանությունից հետո հայաստանյան մեդիայում (այդ թվում՝ սոցցանցերում) առկա խտրականության եւ ատելության խոսքի որոշ դրսեւորումները,

- հիմք ընդունելով որեւէ տեսակի խտրականության անթույլատրելիության մասին միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը, հայաստանյան օրենսդրության համապատասխան դրույթները, ինչպես նաեւ Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի կանոնագրի 5.1 եւ 5.2. կետերը («խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով, որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը»),

- հիմք ընդունելով Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եւ Տեղեկատվական վեճերի խորհրդի՝ «Խտրական վերաբերմունքի եւ ատելության խոսքի տարածման անթույլատրելիության մասին»_2023թ.հոկտեմբերի 9-ի հայտարարությունը,

- նկատի ունենալով, որ մեդիան նաեւ հասարակությանը կրթելու, բացասական կարծրատիպերը կոտրելու կամ դրանց արմատավորումը կանխելու, հանդուրժողականության համընդհանուր սկզբունքները տարածելու առաքելություն ունի,

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը մշակել է բռնի տեղահանվածների եւ փախստականների, մասնավորապես՝ Արցախից բռնի տեղահանվածերի վերաբերյալ լուսաբանումների սույն ուղեցույցը:

Ցանկացած արտասովոր իրավիճակում, ինչպես եւ լրատվամիջոցների եւ լրագրողների ամենօրյա մասնագիտական գործունեության ընթացքում, անհրաժեշտ է առաջնորդվել մասնագիտության ընդհանուր էթիկական սկզբունքներով: Սակայն այդ սկզբունքներին հետեւելու անհրաժեշտությունը սրվում է հատկապես այնպիսի զգայուն իրավիճակներում, ինչպիսին է բռնի տեղահանության հետեւանքով տեղի ունեցած զանգվածային գաղթը: Ուստի, Դիտորդ մարմինն առաջարկում է բռնի տեղահանվածների, հատկապես արցախցիների վերաբերյալ լուսաբանումներում առաջնորդվել հետեւյալ խորհուրդներով:

Եղե՛ք նրբանկատ

Պետք է հաշվի առնել, որ Արցախից բռնի տեղահանվածները ոչ վաղ անցյալում ծանր հոգեբանական սթրեսի են ենթարկվել՝ հարկադրաբար հրաժարվելով իրենց սովորական կյանքից ու կենսամիջավայրից, կորցրել են տունը, հիմնական զբաղմունքը, տարիներով արմատացած սովորությունները: Նրանցից շատերը նաեւ կորցրել են մտերիմ հարազատներին եւ/կամ վերապրում են բռնագաղթից անմիջապես առաջ եւ դրա ընթացքում հարյուրավոր արցախցիների մահը Ադրբեջանի ագրեսիայի կամ վառելիքի պահեստում տեղի ունեցած պայթյունի ժամանակ: Հետեւաբար, արցախցիների խնդիրների լուսաբանման ժամանակ կամ նրանց հետ հարցազրույցներ անելիս պետք է լինել առավելագույնս նրբանկատ, խուսափել կոպիտ վերաբերմունքից կամ անպատեհ «գերհոգատարությունից»: Անհրաժեշտ է բծախնդրորեն ընտրել բառամթերքը թե՛ ապրումակցման, թե՛ քննադատության, թե՛ ուղղակի իրադարձային լուսաբանման պարագայում:

Հաճախ «սովորական» քաղաքացիները՝ նրանք, ովքեր սովոր չեն շփվել լրագրողների հետ, կարող են տարբերվող վարքագիծ դրսեւորել, շփոթվել, հուզվել, խուճապի մատնվել լրագրողի հետ զրուցելիս: Փորձեք զրույցը սկսել ոչ թե ցավոտ, բարդ, սուր հարցերից, այլ խոսել ընտանիքի, կյանքի, նախասիրությունների մասին, լիցքաթափել զրուցակցի լարվածությունը, վստահություն ձեռք բերել, ապա անցնել բուն թեմային: Խուսափեք հրապարակել զրուցակցի անձնական կյանքի մանրամասները կամ դրանց անդրադարձեք միայն այն պարագայում, երբ դրանք բխում են նյութի նպատակից: Հատկապես խոցելի են տեղահանության ենթարկված երեխաները, ուստի պետք է ավելի նրբանկատ լինել նրանց մասնակցությամբ նյութեր պատրաստելիս, մանավանդ, եթե թեման բռնագաղթն է կամ նախընթաց շրջափակումն ու ռազմական գործողությունները եւ երեխայի վկայությունը դրանց մասին: Համոզվեք, որ երեխան կամ խնամակալը (հայրը, մայրը, այլք) գիտեն, որ խոսում են լրագրողի հետ: Հարցրեք ինքներդ ձեզ՝ արդյո՞ք անհրաժեշտ է երեխաներին նման հարցեր տալ: Եթե մեծահասակը կարող է նույն պատասխանները տալ երեխայի փոխարեն, ապա օգտվեք այդ հնարավորությունից:

Խուսափե՛ք ընդհանրացումներից

Հարկ է հիշել, որ ցանկացած խումբ՝ ազգային, տարածաշրջանային, կրոնական, գենդերային եւ այլն, միայն արտաքուստ է միասնական: Այդ խմբերում միշտ կան մարդիկ, որոնք չեն կիսում մեծամասնության կամ առաջնորդող, հանրությանը հայտնի շերտի տեսակետները: Հետեւաբար, պետք է խուսափել ընդհանրացումներից,

հատկապես խոցելի խմբերի, տվյալ դեպքում՝ բռնի տեղահանված արցախցիների մասին լուսաբանման պարագայում: Պետք է հիշել, որ «բոլորը» չեն կարող միանման լինել, յուրաքանչյուր մարդ անհատականություն է: Առավելեւս, ընդհանրացումներից պետք է խուսափել մասնավոր դեպքերը լուսաբանելիս: «Արցախցին կարծում է…», «արցախցիներն ուզում են վերադառնալ հայրենի տուն», կամ հակառակը՝ «արցախցիներն ուզում են մնալ Մայր Հայաստանում», կամ՝ «արցախցիները մտադիր են փախստականի թուղթ վերցնել ու արտագաղթել երրորդ երկիր» տիպի ձեւակերպումները ոչ միայն ճշգրիտ չեն, այլեւ կարծրատիպեր են ձեւավորում կամ ամրապնդում են եղած կարծրատիպերը: Ցանկալի է նմանատիպ պնդումներ անելիս հիմնվել գոնե որեւէ սոցիոլոգիական հետազոտության կամ վիճակագրության վրա: Ինչպես որեւէ այլ ինքնության պարագայում (էթնիկական, կրոնական, գենդերային, քաղաքական, սոցիալական, տարածաշրջանային եւ այլն) պետք չէ շեշտել արցախցի լինելու հանգամանքը, եթե լրագրողական նյութի առարկան այդ ինքնության հետ ուղղակի կապ չունի: Առավելեւս, եթե նյութը բացասական երանգավորմամբ ինչ-որ պատմության մասին է (օրինակ՝ «արցախցի վարորդը վրաերթի է ենթարկել…», «վիճաբանության կողմերից մեկը արցախցի է…», «թանկացումների դեմ բողոքի ցույցի մասնակից արցախցին…» եւ այլն:

Աշխատեք լրատվական նյութի մեջ չզետեղել այնպիսի տեսանյութեր/լուսանկարներ, որոնք կծառայեն արցախցիների (կամ բռնի տեղահանության ենթարկված որեւէ խմբի) մասին կարծրատիպերի խորացմանը:

Աշխատեք այլոց ասածը կամ սոցցանցային գրառումները մեջբերելիս բառացի չվերարտադրել կամ չշեշտադրել (օրինակ՝ վերնագրում) ատելության կամ խտրական խոսքը: Եթե դրան վերաբերող լուսաբանումը անհրաժեշտ է, ապա փորձեք բովանդակությունը ներկայացնել նկարագրողական ձեւակերպումների միջոցով:

Մի՛ փորձեք խղճահարություն առաջացնել

Խուսափե՛ք խղճահարություն առաջացնող լուսաբանումից՝ անհարկի ցույց տալով լացող մարդկանց, հատկապես՝ երեխաներին, արցախցիներին պատկերելով միշտ տխուր, ընկճված, անկենսունակ վիճակում: Պետք է առաջնորդվել այն գաղափարով, որ ինչպես որեւէ խոցելի խումբ կամ անհատ, այնպես էլ բռնի տեղահանության ենթարկված արցախցիները կամ որեւէ անհատ արցախցի ոչ թե խղճահարության կարիք ունեն, այլ այնպիսի պայմանների, որտեղ իրենց կզգան հավասար, հասկացված, օգտակար: Խնդիրների եւ դժվարությունների կողքին ցույց տվեք նաեւ հաջողության, դժվարությունը հաղթահարելու, ինտեգրման, փոխօգնության մասին պատմություններ, ուղղակի մարդկային պատմություններ:

Խուսափե՛ք ծայրահեղացումներից եւ անպատեհ համեմատություններից: Օրինակ՝ համեմատությունը Արցախի շրջափակման եւ Լենինգրադի բլոկադայի, արցախցիների բռնի տեղահանության եւ Մեծ Եղեռնի հետ եւ այլն: Որքան էլ տարբեր իրադրությունների միջեւ որոշակի խորհրդանշական կամ առարկայական նմանություններ լինեն, հաշվի առեք, որ գործ ունեք կենդանի մարդկանց հետ, որոնք գտնվում են առավել խոցելի վիճակում, եւ որոնց վրա կարծրատիպային պիտակներն ու բնորոշումները կարող են ցավոտ ազդեցություն ունենալ:

Խուսափե՛ք «գույները խտացնելուց»՝ երաժշտական ուղեկցության կամ մոնտաժային այլ էֆեկտների միջոցով։ Ցանկալի է հրաժարվել զգայուն բովանդակությամբ (բռնություն, խեղված մարմիններ եւ այլն) տեսանյութեր եւ լուսանկարներ հրապարակելուց, իսկ հրապարակելու դեպքում կիրառել ֆիլտրեր՝ ծածկելով զգայուն հատվածները կամ դիտողին նախապես զգուշացնելով սպասվող բովանդակության մասին։

Նախապատրաստվեք՝ ինքներդ ձեզ ու զրուցակցին չվնասելու համար

Հարցազրույցներից առաջ նախօրոք փորձեք հնարավորինս շատ տեղեկություն հավաքել զրույցի առարկայի վերաբերյալ՝ ավելի լավ հասկանալու համար թեման/զրուցակցին բնորոշող առանձնահատկությունները՝ աշխարհագրությունը, կենցաղը, տեղային սովորությունները եւ այլն։ Կարեւոր է նյութը պատրաստելիս լավ պատկերացում կազմել Արցախի շրջափակման, ռազմական ագրեսիայի եւ դրան հաջորդած բռնագաղթի օրերին տեղերում առկա իրավիճակի մասին։ Ավելորդ չի լինի արցախցիներին վերաբերող լուսաբանումներում ներգրավել հենց արցախցի (արցախյան ծագմամբ) լրագրողների՝ համատեքստն ու նրբությունները ավելի լավ տեսնելու եւ վերարտադրելու համար։

Զրուցակցին քաղաքական պայքարի գործիք մի՛ դարձեք

Հայաստանյան լրատվամիջոցներն ու լրագրողները, որոնց մի մասը այս կամ այն չափով կապված է քաղաքական տարբեր հոսանքների եւ ուժերի հետ, երբեմն տրվում են արցախցիներին ներքաղաքական պայքարում օգտագործելու գայթակղությանը։ Ընդ որում, սա վերաբերում է ե՛ւ իշխանամետ, ե՛ւ ընդդիմությանը հարող մի շարք լրատվամիջոցներին։ Այս գործելաոճը ոչ միայն հակասում է օբյեկտիվ լրագրության սկզբունքներին, այլեւ ավելի խոցելի վիճակի մեջ է դնում բռնագաղթի ենթարկված արցախցիներին՝ ամրապնդելով նրանց վերաբերյալ այս կամ այն կարծրատիպը։ Ուստի, հարկ է հրաժարվել նման գործելաոճից։

Հարգե՛ք առանձնահատկությունները, օրինակ՝ բարբառը

Ինչպես եւ ցանկացած տարածաշրջանում ապրող բնակչի, այնպես էլ արցախցիների համար բարբառն ինքնության կարեւոր բաղկացուցիչներից է։ Սա է՛լ ավելի է կարեւորվում այն պարագայում, երբ այդ ինքնությունը հայտնվում է ուծացման, անհետացման վտանգի առաջ։ Ուստի, նրանց հետ առանձին զրույցներում եւ հրապարակումներում պետք է հաշվի առնել այս հանգամանքը եւ հնարավորություն տալ արցախցուն ցանկության դեպքում հաղորդակցվել իր բարբառով՝ առանց ցույց տալու դրա հանդեպ որեւէ ընդգծված (առավելեւս՝ բացասական) վերաբերմունք։

Առաջնորդվեք նաեւ Դիտորդ մարմնի՝ «Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսեւորումները բացառելու եւ հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ» եւ «Խոցելի խմբերի խնդիրները լուսաբանող լրագրողների համար» ուղեցույցներով։